Հետազոտական աշխատանք

Թեմա՝ **Կենսաբանություն առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը**

Հեղինակ՝ Լարիսա Պետրոսյան
Երևանի Գ. Նժդեհի անվան թիվ 161 դպրոցի ուսուցչուհի

Երևան, 2022

Ներածություն

Աշխատանքում ուսումնասիրել ենք դպրոցներում դասավանդման ընթացքում աշակերտների մեջ արժեքային համակարգի ձևավորման խնդիրները: Անդրադարձել ենք հատկապես բարձրացվող խնդիրների ուսումնասիրությանը կենսաբանության առարկայի դասավանդման շրջանակներում:

Ակնհայտ է կենսաբանության ուսուցման դերը սովորողների աշխարհայացքի ու արժեհամակարգի ձևավորման, աշխարհընկալման, ճանաչողության, հոգեկան գործընթացների զարգացման, ինքնիրացման և կրթական այլ խնդիրների լուծման գործում: Այս իրողությունները լայնորեն լուսաբանված են գիտական գրականության մեջ և ամրագրված շատ երկրների, այդ թվում նաև ՀՀ կրթական քաղաքականությամբ: Այս աշխատանքում առաջին հերթին արդրադառնալու ենք առարկայի ուսուցման նպատակների և խնդիրների իրականացմանը, ապա՝ դասավանդմանը զուգահեռ սովորողների արժեհամակարգի կազմակերպմանը: ՀՀ հանրակրթության միջին դպրոցում գործող կենսաբանության դասընթացում ըստ էության բացակայում էր դեդուկտիվ մեթոդը, այն զուրկ էր ապացուցողական կառույցից, և, բնականաբար, չէր կարող շատ թե քիչ ամբողջական ձևով իրականացնել սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանն ուղղված իր գլխավոր գործառույթներից մեկը, ինչը որպես առաջնահերթ նպատակ դիտարկվում է Հանրակրթության պետական չափորոշչում, Կրթակարգում և կենսաբանության առարկայական չափորոշչում: Վիճակը անմխիթար էր սովորողների լեզվամտածողության զարգացման խնդրի պարագայում, որտեղ չէր օգտագործվում կենսաբանության կրթական հսկայական ներուժը: Դասընթացում կենսաբանության կիրառական ոլորտը ներկայանում էր հատվածական փաստերով՝ հիմնականում տեքստային խնդիրների շրջանակներում: Այնուհետև, լուրջ թերություններ կային դասընթացի բովանդակային կառույցի մեջ: Նրանում գործնական-վարժանքային հարցերը զգալիորեն գերակայում էին տեսականգաղափարական նյութի նկատմամբ. չէր երևում կենսաբանության համար հիմնարար նշանակություն ունեցող տրամաբանության գործողության դերը, չէր ուսումնասիրվում համախմբի կարևորագույն հասկացությունը, ճիշտ չէին դրվում շեշտադրումները կենսաբանության խնդիրների լուծման և մի շարք այլ հասկացությունների ու փաստերի ուսուցման խնդրում:

Միևնույն ժամանակ անժխտելի է, որ յուրաքանչյուր կրթական համակարգ և նրա բաղադրիչները մտնում են տվյալ հասարակարգի ընդհանուր գաղափարախոսական կառույցի մեջ և չեն կարող խուսափել նրա ազդեցությունից: Այդ տեսակետից բացառություն չէ նաև բնագիտական առարկաների և, առանձնապես, կենսաբանության դասընթացը: Եվ հասարակական-քաղաքական նոր իրողությունների պայմաններում անհրաժեշտություն է առաջանում ձերբազատվելու նախկին գաղափարախոսության մեջ արժևորված կաղապարներից, մեջտեղ բերելու կրթական նոր արժեքներ: Այսպիսով, հրատապ է կենսաբանության կրթության գործառույթների առաջնահերթության մեջ փոփոխություններ կատարելու խնդիրը: Առաջին պլան է մղվում ոչ թե զուտ կենսաբանության ինքնանպատակ ուսուցման, այլ առարկայի ուսուցման միջոցով անհատի կրթության խնդիրը, կարևորվում է կենսաբանության հանրակրթական դերը, դրա հնարավոր ազդեցությունները աշակերտի և հասարակության անդամի արժեքային համակարգի ձևավորման գործում: կարևորվում է դասավանդման միջոցով աշակերտի հոգևոր-բարոյական դաստիարակությունը ամրացնելը, կրթության բովանդակության համապատասխանեցումը միջազգային կրթական չափանիշներին, խնդիրներին հարմարեցնելը, որոնց լուծումը էական նշանակություն ունի հայ մարդու ազգային նկարագրի և ՀՀ քաղաքացու ձևավորման գործում, և որոնք կա՛մ չէին դիտարկվում խորհրդային կրթական համակարգում, կա՛մ էլ արժանանում էին հպանցիկ անդրադարձի: Այսպիսով, պետք է արձանագրել, որ անցումային շրջանում ժամանակի հրամայականն է միջին դպրոցի «կենսաբանություն» առարկայի այնպիսի ուսումնական ծրագրի և դասընթացի ստեղծումը, որոնք համահունչ լինեին վերը նշված իրողություններին:

Այս աշխատանքը նախատեսված է կրթության ոլորտի բոլոր մասնագետների, իսկ ավելի կոնկրետ՝ դասապրոցեսում աշխատողների, ուսուցիչների, առարկայական ուսուցիչների, մանկավարժներին վերապատրաստողների, կրթական չափորոշիչների ու ծրագրերի հեղինակների, քաղաքականության մշակման պատասխանատուների, դպրոցների ղեկավարների համար, որոնք աշխատում են հանրակրթության տարրական, միջին և ավագ օղակներում: կարող է որպես ուղեցույց ծառայել նաև բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի համար: Այս գլխի նպատակն է օժանդակել և հզորացնել այն ուսուցիչներին, որոնք ցանկություն ունեն իրենց պրակտիկայում ինտեգրելու նորարարական մոտեցումներ: Այն ուշադրություն է հրավիրում մի շարք

մեթոդների և մանկավարժական մոտեցումների վրա, որոնք կարելի է կիրառել դասապրոցեսի ժամանակ:

Փորձի նկարագրություն

Դասավանդման գործընթացում ժողովրդավարական մշակույթի արժեքները հաշվի առնող և վերաբերմունքները, հմտություններն ու գիտելիքը և քննադատական ընկալումը զարգացնող ուսումնադաստիարակչական աշխատանքների հաջող ներառումը կախված է լինելու այն հանգամանքից, թե ուսուցիչներն ինչքանով են լավ պլանավորում և կազմում ուսումնական աշխատանքները՝ հարմարեցնելով դրանք իրենց և իրենց աշակերտների կարիքներին: Ժողովրդավարական մշակույթի կարողունակությունները կարելի է զարգացնել որպես հիմնական դպրոցական աշխատանքների մաս և բոլոր առարկաների շրջանակներում: Կարիք չկա, որ ուսուցիչները հրաժարվեն այն ամենից, ինչ կատարում են, սակայն նրանց առաջարկվում է դիտարկել իրենց ներկայիս աշխատակարգերը հարստացնելու հարցը՝ դասավանդման մեջ կիրառելով նաև նորարարական մեթոդներ, որոնք կնպաստեն կենսաբանության առարկայի յուրացմանը զուգահեռ ստեղծել արժեքների համակարգ, որոնք կծառայեն հանրության և անհատի զարգացմանը: զարգացնելը կարելի է հասկանալ ինչպես բացահայտ՝ որպես թեմա, այնպես էլ թաքնված՝ որպես փոխհատվող խնդիր/մտահոգություն, որն ինտեգրված է դպրոցի ընդհանուր ուսումնադաստիարակչական գործընթացներում՝ համատեղ պատասխանատվության շրջանակներում:

Կրթության նկատմամբ համատեղ պատասխանատվությամբ է սահմանվում, թե ինչն է կարևոր սովորել, իսկ ընդհանուր նպատակների ուղղությամբ աշխատանքում կարելի է ներգրավել բազմաթիվ շահակիցների՝ ծնողներ, ուսումնական հաստատություններ, քաղաքացիական հասարակություն և երիտասարդներ, որոնք համագործակցության և մասնակցության ձևաչափով կորոշեն, թե որ արժեքները, վերաբերմունքները, հմտությունները, գիտելիքն ու քննադատական ըմբռնողությունն է իրենց կարծիքով արդիական ու կարևոր՝ տվյալ հասարակությունում տվյալ պահին երեխաներին ու պատանիներինհաղորդելու իմաստով:

Ստորև ուրվագծված մանկավարժական մոտեցումներում ոչ միայն ընտրություն է կատարված ի օգուտ աշակերտի զարգացման, այլ նաև դրանք օգնում են ձևավորել ավելի հաճելի և ապահով ուսումնական միջավայրեր և ուղիներ գտնել բռնի, խտրական և հակաժողովրդական կառուցակարգերին այդ միջավայրերում անդրադառնալու համար: Ուսուցիչները հեշտ են հաղորդակից դառնում ժամանակակից մեթոդներին և այսպիսով նրանք ավելի լավ են հաղորդում իրենց պրակտիկաներն ու արժեքները և խուսափում են հնարավոր խտրական փորձառությունները պահպանելուց: Նրանք նույնիսկ կարող են բարձրացնել իրենց հավանական նախապաշարմունքների և կանխակալ կարծիքների վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը և կարող են տարբեր, ավելի նրբերանգային հայացք նետել սովորողների վրա: Ուսուցիչները և համապատասխան մյուս շահակիցները կարող են այս մանկավարժական մոտեցումները գործածել՝ վավերացնելու այն, ինչ իրենք անում են առօրյա աշխատանքում:

Նորարարական մանկավարժական մոտեցումներն ու մեթոդները ոգևորում են սովորողներին՝ ակտիվ մասնակիցը դառնալու փորձառության, բացահայտման, հարցադրման, վերլուծության, համեմատության, մտազննման և համագործակցության գործընթացներում: Նրանք հասցեագրում են սովորողներին՝ որպես կայացած անհատներ, ներառում են սովորողների իմացական, հուզական և փորձառական հետաքրքրությունը (իրենց գլխով, սրտով և ձեռքերով): Օգտագործված մեթոդները, հաղորդակցության ոճը և հենց ռազմավարություններն ունեն ժողովրդավարական կարողունակությունները զարգացնելու ահռելի ներուժ: Բայցևայնպես, ուսուցիչները զարգացմանը կարող են մասնակցել բազմաթիվ եղանակներով: Ուսուցիչներն ու ուսուցիչներին պատրաստողները կարող են մեթոդներն ակտիվ գործածել դասավանդումը պլանավորելիս և գնահատելիս. նրանք կարող են ուշադրությունը կենտրոնացնել դասավանդման բովանդակության վրա՝ օգտագործելով այնպիսի կրթակարգային մոտեցումներ, որոնցով առկա կրթական ծրագրի բովանդակության շրջանակներում իրենք կարող են անդրադառնալ մտավոր իմացության, մարդու իրավունքների, արդարության և այլ բնագավառներին՝ միաժամանակ փոփոխելով այն դասընթացի ներսում կամ համագործակցային եղանակով՝ մի շարք առարկայական ուղղությունների համադրման միջոցով: Հանրակրթական բոլոր առարկաներում հնարավոր է ներառել առաջարկվող մեթոդները, սակայն մենք շեշտը դնում ենք կենսաբանության առարկայի վրա և դրա առանձնահատկությունները հաշվի առնելով ենք եկել եզրահանգումների:

Ժողովրդավարական քաղաքացու կարողունակությունները կարելի է զարգացնել ուսման պրոցեսին, ինչպես նաև դասավանդման բովանդակությանը վերաբերող մոտեցումներով: Հաճախ նոր մեթոդները կրթական որևէ աշխատանք զարգացնում են ինչպես բովանդակության, այնպես էլ պրոցեսին առնչվող մի շարք բաղադրիչների համադրմամբ: Սովորողների՝ ժողովրդավարական մշակույթի կարողունակությունները զարգացնելու գործընթացը պլանավորելը և դրան հետամուտ լինելն, այսպիսով, կարևոր է ուսումնառության բոլոր ֆասիլիտատորների համար: Դեպքերից շատերում կան պլանավորման որոշակի սկզբունքներ: Ուսուցիչները՝ որպես ուսումնառության առաջնորդներ/ ֆասիլիտատորներ, պլանավորում են կրթական աշխատանքներն այնպես, որ ներառեն հետևյալ հնարավորությունները:

Կրթությունը պետք է դիտել որպես մարդկային կապիտալի արտադրություն: Կրթությունն օրըստօրե դառնում է հասարակության զարգացման շարժիչ ուժը և ոչ միայն անձի զարգացման, այլև ազգային ինքնության և մարդկության առաջընթացի գրավականը: Բարձրագույն մասնագիտական կրթության դերը պետությունների համար ռազմավարական դեր ու նշանակություն ունի, քանի որ բոլոր ոլորտներում բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստմամբ է պայմանավորված տնտեսության և պետության համար այլ կենսական նշանակություն ունեցող ոլորտների հետագա զարգացումը: Այս խնդիրը միջազգայնացման գործընթացում փոքր պետությունների համար ավելի առաջնային է դառնում, քանի որ որպես օրակարգային հարց առաջ է քաշվում ազգային կրթության գրավչության մեծացման հարցը՝ որպես երկրի ներսում եղած ինտելեկտուալ ներուժի պահպանման միջոց: Իր բոլոր առաջընթացներով ու նվաճումներով հանդերձ՝ ժամանակակից կրթությունը կարիք ունի հետևողական բարեփոխումների, ինչն այսօր դիտվում է որպես կրթության կառավարման գլխավոր գործոն, որի խնդիրը որակի բարձրացումն է:

Չափազանց մեծ կարևորություն ունի մանկավարժություն մասնագիտության որակավորում ստացող ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորումը, մարդկային հարաբերություններում մասնագիտորեն կողմնորոշվող, սոցիալ-մշակութային միջավայրում երեխաների հետ դաստիարակչական աշխատանքներ կազմակերպող, անձի և նրա միկրոմիջավայրի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները, անձի հետաքրքրություններն ու պահանջմունքները, վարքագծային շեղումները, կոնֆլիկտային իրավիճակները բացահայտող, կրթադաստիարակչական և սոցիալականացման

գործունեության բարելավմանը նպաստող բարձրակարգ մասնագետի պատրաստումը: Նշված գործընթացներում պատրաստվածության ապահովման համար անգնահատելի է համապատասխան մեթոդոլոգիաների և դասընթացի դերն ու նշանակությունը: Դասընթացների առարկան մանկավարժական էթիկայի շուրջ գիտելիքների, բարոյական գիտակցության ձևավորման գործընթացը պիտի լինի, մասնագիտական պարտք ու պատասխանատվություն, պատիվ ու արժանապատվություն բարոյական կատեգորիաների ձևավորումը: «Մանկավարժական էթիկա» դասընթացի ուսուցումը ենթադրում է մանկավարժին բնորոշ բարոյական հատկանիշների բազմակողմանի ուսումնասիրություն, մարդկային վարքագծի օրինաչափ դրսևորումների բացահայտում, անձնային հատկությունների և միջանձնային հարաբերությունների ախտորոշում:

Մասնագիտական առանձնահատկություններով պայմանավորված՝ մանկավարժի ողջ գործունեությունն ունի բարոյական ուղղվածություն: Մանկավարժի աշխատանքային գործունեության օբյեկտը ոչ միայն ընդհանրապես մարդն է, հասուն, ինքնուրույն անձը, այլև նոր հասունացող անձը, ուստի ուսուցչից է կախված, թե ինչպիսին կլինի այդ մարդը հետագայում բարոյական առումով: Բժշկի, իրավաբանի մասնագիտությունների օբյեկտը նույն մարդն է: Բայց նրանք ներգործում են մարդու վրա՝ օգտագործելով բժշկական, իրավաբանական, օրենսդրական և այլ միջոցներ: Մանկավարժական պրակտիկայի վերլուծությունը, առաջավոր ուսուցիչ-դաստիարակների մենագրական ուսումնասիրությունները, հարցազրույցները դպրոցների տնօրենների և փոխտնօրենների հետ թույլ են տալիս առանձնացնելու մանկավարժի անձնային հատկությունների հետևյալ խմբերը՝ բնավորության գծեր, ինտելեկտուալ, բարոյական, կամային, գեղագիտական, հուզական, ֆիզիկական որակներ: Մանկավարժն իր սաների վրա ներգործում է առավելապես իր իմացությամբ, վարպետությամբ, անձնային որակներով, օրինակով: Ա. Բալյանի «Մանկավարժական հոգեբանության հարցեր» գրքում ևս ուսուցիչդաստիարակի անձնային հատկանիշները վերլուծելիս առավելապես շեշտադրված են բարոյական այնպիսի որակների ձևավորման հարցերը, ինչպիսիք են՝ ազնվություն, բարություն, մարդասիրություն, համեստություն, ուղղամտություն, մանկավարժական արդարացիություն, անշահախնդրություն, անկեղծություն, մանկավարժական լավատեսություն, հայրենասիրություն, կենսական ակտիվ դիրքորոշում, մանկավարժի խիղճ, էթիկական բարձր կուլտուրա [1, էջ 438]: Եթե մանկավարժն իր սաների համար չի ծառայում որպես բարոյական անբասիրության

օրինակ, ապա չի կարող նրանց մեջ սերմանել բարոյական դրական հատկանիշներ, ձևավորել վեհ իդեալներով օժտված մարդ: Բարոյական սկզբունքների պահպանումը ցանկացած գործունեություն և հաղորդակցում կդարձնի առավել արդյունավետ:

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Համենայնդեպս, բիզնես ընկերությունները հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին, փողերին ու ազդել նրա վրա:

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը:

Սովորողները հաճախ համեմատում են անծանոթ երևույթը՝ ծանոթի հետ, և անծանոթ երևույթները որակում են որպես «խայտառակություն», «ավելի վատ» կամ անգամ՝ «ոչ քաղաքակիրթ»: Հարկ է, որ ուսուցիչները տեղյակ լինեն արժեքների այսօրինակ համեմատությանը և այն փոխարինեն «համեմատում՝ հանուն իմացության» մոտեցմամբ, ինչը ենթադրում է նմանություններն ու տարբերություններն առանց գնահատական տալու տեսնելն ու դիմացինի տեսակետը ընդունելը: Այլ կերպ ասած՝ սովորողներին կարելի է խրախուսել, որպեսզի նրանք զարգացնեն իրենց ընկալումն այն մասին, թե ինչպես է, որ իրենց համար նորմալ համարվող երևույթը կարող է խայտառակ մի բան համարվել մեկ ուրիշի կարծիքով և հակառակը, և որ երկու մոտեցումն էլ պարզապես տարբերվում են միմյանցից ինչ-որ առումներով և նման են իրար այլ առումներով: Այսպիսով սովորողները մտազննում և իրենց արժեքներն ու մոտեցումները

գիտակցաբար համեմատում են տարբերվող արժեքների և մոտեցումների հետ, որպեսզի ավելի տեղյակ լինեն, թե ինչպես են նրանք ձևավորում իրողությունը:

Կարևոր է չմոռանալ նաև, որ նմանությունների և տարբերությունների ետևում դրված են առանձին աշխատակարգերի, մտքերի, արժեքների և համոզմունքների բացատրությունները: Ֆասիլիտատորները կարող են օժանդակել սովորողներին, որպեսզի վերջիններս վերլուծեն այն ամենն, ինչ կարող է ընկած լինել այլոց արածի ու ասածի մեջ և նրանց տեսածի հիմքում: Սրան կարելի է հասնել, օրինակ՝ հանգամանալից քննարկման և վերլուծության միջոցով՝ հարցումների վրա հիմնած մեթոդներով կամ գրավոր կամ ձայնա/տեսա աղբյուրների միջոցով: Այնուհետև կարելի է թույլ տալ, որ սովորողները մտազննեն այս վերլուծությունը՝ իրենց իսկ աշխատակերպերի, արժեքների և համոզմունքների վերաբերյալ հնարավոր հարցերի տեսանկյունից:

Համեմատումը, վերլուծությունն ու փորձառությունը պետք է ուղեկցվեն մտազննման/ հետհայաց վերլուծությամբ ու քննական իմացությունն ու ընկալումը զարգացնելու համար տրված ժամանակով և տարածությամբ: Ֆասիլիտատորները՝ հատկապես ոչ ֆորմալ և ֆորմալ կրթության դաշտում, պետք է երաշխավորեն, որ այդ ժամանակն ու տարածությունը տրվի մտածված ու պլանավորված ձևով: Օրինակ՝ ուսուցիչները կարող են սովորողներին խնդրել քննարկել իրենց փորձառությունը, խրախուսել սովորողներին՝ վարել իրենց ուսանածի վերաբերյալ գրանցատետր, և գրել, նկարել, կիսվել կամ այլ կերպ արձագանքել իրենց սովորածին: Ծնողները ևս կարող են անաղմուկ նստել իրենց երեխաների հետ և խոսել նրանց փորձառության մասին:

Մտազննումը կարող է և պետք է հիմք դառնա գործողություն ձեռնարկելու, մյուսների հետ երկխոսության մեջ մտնելու և մյուսների հետ համագործակցային աշխատանքների մասնակցելու համար: Ֆասիլիտատորները կարող են ստանձնել խրախուսելու և անգամ համագործակցային գործողությունը կառավարելու պատասխանատվություն, օրինակ՝ «համադպրոցական» մոտեցումների կամ դպրոցական գործընկերությունների միջոցով բարելավելով սոցիալական և ֆիզիկական միջավայրը:

Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտորակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական

մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Սովորողների յուրացրած արժեքների, վերաբերմունքների և հմտությունների վրա մեծ ազդեցություն է ունենում այն ձևը, որով ուսուցիչները հաղորդակցվում և փոխշփվում են աշակերտների հետ: Ժողովրդավարական արժեքները, մոտեցումներն ու հմտությունները հնարավոր չէ յուրացնել միայն ժողովրդավարության մասին ֆորմալ դասավանդման միջոցով, այլ՝ հարկ է նաև գործնականում կիրառել դրանք: Արժեքները, ոչ բացահայտ կերպով, փոխանցվում են ուսուցիչների գործունեության և հաղորդակցության ձևի միջոցով: Մանկավարժները կարող են ձևավորել իրենց կրած արժեքների ավելի մեծ իրազեկություն և իրենց առօրյա աշխատանքում արտացոլել այն արժեքները, վերաբերմունքները, հմտությունները, գիտելիքն ու քննադատական ընկալումը, որ անձը պետք է զարգացնի: Մանկավարժների կատարած ընտրությունները կարող են օգնել կամ խանգարել սովորողների շրջանում ժողովրդավարական էթոսի ձևավորմանը: Ժողովրդավարական հասարակությունների կայացմանը նպաստող ԵԽ արժեքների ու սկզբունքների փոխանցումը դասապրոցեսում ավելի շատ բխում է ուսուցիչների հետ հարաբերություններից, քան կրթական ծրագրի հզոր լինելու հանգամանքից: Կատարելու միջոցով սովորելը և փորձարարական ուսումնառությունը սովորողներին ներքաշում են փորձառության, մարտահրավերի և մտազննման գործընթաց, որը ԺՄԿ-ն զարգացնելու կարևոր ներուժ ունի: Իրենց վերաբերմունքի, վարքագծի և աշխատաոճի միջոցով ուսուցիչները կարող են ստեղծել ապահով ուսումնական միջավայրեր, լուծել խտրականության խնդիրը և աջակցել լայն կամ հիմնական մարդասիրական բաղադրիչների յուրացմանը:

Անհրաժեշտ է ընդգծել նաև տարբերակված հոսքերի ուսումնասիրման խնդիրները՝ հնարավորինս բարձր արդյունք ստանալու համար, հատկապես կենսաբանություն առարկայի դասավանդման ժամանակ: Մանկավարժության մեջ և պրակտիկայում տարբերակված հոսքի ուսուցման խնդիրը արդիական է եղել բոլոր ժամանակներում: Տարբերակված հոսքային ուսուցումը լայն կիրառում ունի տարբեր երկրների կրթական համակարգում: Այն իրականանում է տարբեր ձևերով՝ կամ բնագիտամաթեմատիկական և հումանիտար բնագավառի առարկաների միջև ընտրությամբ, կամ այն առարկաների խորացված ուսուցմամբ: Կենսաբանության տարբերակված դասընթացի բովանդակության ձևավորումը հիմնվում է մարդասիրական, մշակութահարմարության,

գիտապատմական, հոսքային տարբերակման, կենսաբանական գիտական գիտելիքների հիմնարարության, մասնագիտական ուղղվածության և այլ սկզբունքների վրա: Կենսաբանության տարբերակված ուսուցման գործընթացի կազմակերպման հիմնական սկզբունքներն են՝ անհատականացման, ուսումնական և որոնողական-իմացական գործունեության միասնության, պրոբլեմային ուսուցման, երկխոսական ուսուցման, սովորողների կո լեկտիվ և անհատական գործունեության միասնության, սովորողների ստեղծագործական ակտիվության, ինքնուրույնության, իմացական պահանջմունքների և դրդապատճառների բավարարման և այլն:

Կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է ուսուցման գործընթացում «սուբյեկտ-սուբյեկտ» փոխներգործությամբ, կրթական հաղորդակցական, երկխոսական, փոխներգործում (ինտերակտիվ) միջավայրի ձևավորմամբ, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների նպատակային կիրառմամբ, դասարանային և արտադասարանային աշխատանքների հմուտ զուգակցմամբ, դպրոցականների տարիքային, անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Տարբերակված հոսքային ուսուցման մեթոդիկան հիմնվում է ուսուցման փոխներգործում և համագործաքցային մեթոդների կիրառման վրա: Այդ գործընթացում առավել նպատակահարմար է կիրառել դերախաղը, դեպքի նկարագրությունը, հետազոտական նախագիծը և աշակերտների ինքնուրույնության, ստեղծագործական և համագործակցային կարողությունները զարգացնող նորագույն այլ մեթոդներ:

Գիտափորձի արդյունքները վկայում են, որ կենսաբանության տարբերակված հոսքի ուսուցման՝ մեր կողմից մշակված մեթոդիկան արդյունավետ է և կարող է կիրառվել հանրակրթական ավագ դպրոցի բնագիտական հոսքում կենսաբանության ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով, մասնագիտական ուսումնական հաստատությունների կենսաբանության ուսուցման պրակտիկայում, ինչպես նաև մանկավարժական կադրերի որակավորման բարձրացման համակարգում և մանկավարժական բուհում կենսաբանության ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստության գործընթացում:

Այսպիսով՝ մանկավարժական էթիկայի, բարոյական գիտակցության ձևավորման, բարոյական գործունեության հարցերը մանկավարժություն սովորողների մասնագիտական պատրաստության կարևորագույն խնդիրներից են: Այս արժեքները

կրող մասնագետները, ստանալով համապատասխան որակավորում, կապահովեն դասընթացների շրջանակներում սովորողների ոչ միայն մասնագիտական գիտելիքների ձեռբերմանը, այլև մարդկային դիմագծի ձևավորմանը, արժեհամակարգերի ստեղծմանն ու կայացմանը: մանկավարժական այս գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժի գործունեության էթիկայի և վարքի կուլտուրայի ձևավորվածության մակարդակով, ինչպես նաև մասնագիտական և մեթոդաբանական գիտելիքներով:

Գրականության ցանկ

1. Ա. Ս. Բուդաղյան, Յու. Լ. Սարգսյան, Բոլոնիայի գործընթացը Հայաստանում, Ուղեցույց, Եր., 2008, էջ 11:
2. Բալյան Ա. Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Եր., «Լույս», 1983. – 456 էջ:
3. Բալյան Ա. Ա., Սաղյան Ծ. Պ., Մանկավարժական էթիկա: Ուս. ձեռնարկ բուհերի համար. Եր., «Զանգակ»-97, 2001. – 208 էջ:
4. Բուդաղյան Ս. Ս., Կարաբեկյան Ս. Բ., Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում. Մեթոդական ուղեցույցԲարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն. Եր., Թասկ ՍՊԸ, 2010. – 110 էջ:
5. Պետրոսյան Աղասի, Գործարար հաղորդակցություն, Ֆինանսաբանկային քելեջ, Եր., «Տիգրան մեծ», 2003. – 193 էջ:
6. Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ., Սոցիալական մանկավարժություն /բուհական ձեռնարկ/: Եր., ԵՊՀ հրատ., 2017. – 336 էջ:
7. Запрягаев С. А., Майкл С. О. Интернационализация гарантии качества и аккредитация в высшем образовании. Изд. Воронежского гос. университета, 2007. с 23.
8. Федеральный закон "Об образовании в Российской Федерации", 2012.
9. The Bologna Declaration of 19 June 1999. Main documents of Bologna Process.

10. “Realising the European Higher Education Area”– Communiqué of the Conference of Ministers responsible for Higher Education in Berlin on 19 September 2003.
11. “The European Higher Education Area – Achieving the Goals”–Communiqué of the Conference of European Ministers Responsible for Higher Education, Bergen, 19-20 May 2005.
12. http://socis.isras.ru/files/File/2015/2015_6/Smolin.pdf: